ՎԱՀՐԱՄ ՍՈՖՅԱՆ

ՆԱԽԱՆՎԱԳ ՀԱՅԿԱԿԱՆ

Կոմիտաս հայոց,
Դուն կուտինացի
Երգի պատմահայր,
Դուն նվագահոս
Հայմամավուրք տաղի,
Հին փառքի տոմար,
Նոր ուխտի դաբիր,
Նարեկ ձայնագիր,
Դուն լուսավորիչ,
Կոմիտաս երգիչ:

Կոմիտաս հայոց,
Դուն վեղարավոր
Արվեստի հերոս,
Երգի թագավոր
Ամենայն Հայոց,
Դուն երգակրրոն,
Մեղեդի քարոզ,
Դուն հոգևոր ձոն,
Դուն մըխիթարիչ
Կոմիտաս երգիչ:

Կոմիտաս հայոց,
Նըվագի փարոս,
Հայ երգի Մենտոր,
Քուրմ մըշակույթի,
Դուն սարկավագ Հոր
Վարդապետ որդի,
Խըրիմյանի սան,
Ձայնի Հորդանան,
Երգի Մըկըրտիչ,
Կոմիտաս երգիչ...

1969

ԱՍՔԱՆԱԶ ԱՇԵՄՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍԻ ՊԱՏԿԵՐԻ ՄՈՏ

Թող լինի մասունք, սրբություն սրբոց
Այս լուռ պատկերը մեծ Կոմիտասի,
Թող նշխարք լինի, թող լինի նարեկ,
Մեր այրված սրտին պահպանիչ ասի:
Թող գարունը մեր ծաղկունքով լցվի
Երբեք ձյուն չանի,
Ծիրանի ծառը ամի, բարձրանա,
Առատ բար բռնի,
Թող որ անտունին վարդագույն տուփից
Մեկի փոխարեն հազար տուն շինի:

Կռունկը սիրով, հույսի թևերով,
Հայրենակարոտ մեր եղբայրներին
Դեպի տուն բերի:
Թող ծիծեռնակը՝ մեր ծիծեռնակը,
Մտքի հոգևոր գանձերով լեցուն,
Լուսո տաճարի կամարի ներքո
Հաստատ բույն հյուսի,
Որ հզորաթև նոր սերունդը մեր,
Պարզ երկնքի տակ ճախրի դեպի վեր,
Սիրո աստղիկին սրտի խոսք ասի:

1969 թ. քաղ. Երևան